

հասել էր իւր օգնութեան եւ այնչափ ազնուական մարդասիրութիւն ցոյց էր տուել:

Տարի մը վերջ Մայր իշխանուհին վանքին դիմացը՝ ճորոխի հանդիպակաց ափին վրայ փոքրիկ վկայարան մը շինել տուաւ եւ հոն փոխադրեց երանելուոյն մարմինը, սեղանին առջեւը մարմարէ պարզ կափարիչ մը դրուեցաւ, որուն վրան այս խօսքերը կային փորագրեալ.

ԱՍՏ ԴՆԻ ԵՕԲՆԱՆ ԽՈՒԹԵՑԻ  
ՆԱՅԱՏԱԿԵԱԼ Ի ՎԵՐԱՅ ՅԱԲԱՏՈՅ  
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԲԱԶՄԱԶԱՐԶԱՐ  
ԱԶԳԻՍ ՅԱՅՈՅ.

Քանի մը տարի վերջ ճորոխի ափանց վրայ պտղտող անցաւորը նոյն վկայարանին մէջ ուրիշ գերեզման մը կը տեսնէր հար եւ նման առաջինի՝ անկից վար գետեղեալ եւ որուն այս էր արձանագրութիւնը.

ԱՍՏ ԴՆԻ ԵՕՏՍ ԵՐԱՆԵԼԻ ՆԱՅԱՏԱԿԻՍ  
ԱՂԱԽԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՍԿԱՆՈՒԾ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.

Եթէ մարդկանց սրտին գաղտնիքը շատ անգամ մարմին եւ ոսկի կը ծածկեն, ուր կը մնա ցուրտ քարին տակ ծածկուած գաղտնիքը, որ յաւիտենականութեան օւկիանոսին մէջ կ'երթայ կը խորասուզիր

Երախտագիտութենէ շարժեալ ամէն տարի գարնան գեղեցիկ օր մը Արտանուշի ժողովուրդը կ'ուզային այդ վկայարանին շուրջը, քանի մը ծաղիկներ կը բերէին կը ձգէին այդ գերեզմաններուն վրայ, ծերերը կը պատմէին թէ ինչ մարդ էր Յովնան, թէ ինչպէ՛ս քաջ խմբի մը ընկերակցութեամբ եկեր անթիւ արաբացի աւազակները շնջեր էր եւ թշնամուոյն աւարը ժողովրդեան շնորհէր էր. եւ պարծանք կը ցցնէին սուր մը, նիզակ մը, վահան մը արաբացի աւարէն: Կանայք կը պատմէին թէ ինչպէ՛ս անման գեղեցիկ կին մ'էր Վասկանուշ, թէ